# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-(16/3)-15/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08 օգոստոսի 2016թ

ժամը 10:00

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մանուկյանը, Մ.Սարդարյանը, Ա.Մկրդումյանը, Ա. Օրդյանը և քարտուղար Հ.Ղարիբյանը:

**Օրակարգ**

**Հայտերի ուսումնասիրության մասին**

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-(16/3)-15/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը նիստը հայտարարեց վերսկսված, ուսումնասիրելով «Սաքի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից /05.08.2016/ ստացված եզրակացությունը, գնահատող հանձնաժողովի անդամների հետ միասին որոշեց՝ «Սաքի» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմանով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից հայտերով ներկայացրած գնային առաջարկները որոշեց.

- **«Սաքի» ՍՊԸ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով.
  2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով.
- **«Լեգալ պլյուս» ՍՊԸ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով,
  3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 6-րդ չափաբաժնի մասով
  Մերժել ներկայացրած հայտը 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժիններով.
- **«Լիմուշ» ՍՊԸ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով,
  2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով,
  Մերժել ներկայացրած հայտը 8-րդ չափաբաժնի մասով.
- **«Յասոն» ՍՊԸ-ին՝**
  1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 8-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով,
  2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով.
- **«Սմարթլայն» ՍՊԸ-ին՝**
  2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով.
  Մերժել ներկայացրած հայտը 1-ին, 3-րդ չափաբաժինների մասով.
- **«Հայկարլի » ՍՊԸ-ին՝**
  3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 6-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով
  Մերժել ներկայացրած հայտը 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ չափաբաժինների մասով.

- **«Միսմա» ՍՊԸ-ին՝**

  3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 7-րդ չափաբաժնի մասով,

  Մերժել ներկայացրած հայտը 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով.
- **«Աստղիկ Գրատուն » ՍՊԸ-ին՝**

  Մերժել ներկայացրած հայտը 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

**- Հայտերը մերժվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը գերազանցելու պատճառով:**

- Հանձնաժեղեվը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՇՁԲ-(16/3)-15/3 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված թղթերը և միաժամանակ ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ նախահաշվային արժեքի 75%-ից ցածր գների համար, միաժամանակ որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

Գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| նախագահ | ____________ | Լ.Հարությունյանը |
| անդամներ | ____________ | Ա. Մանուկյան |
| | ____________ | Մ.Սարդարյանը |
| | ____________ | Ա. Մկրդումյան |
| | ____________ | Ա. Օրդյանը |
| քարտուղար | ____________ | Հ. Ղարիբյան |